

ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԱՅԻՍ 2026

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-234-Ն, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-235-Ն (ընդունված՝ 06.05.2026թ., ուժի մեջ՝ 01.07.2026թ.)

- Հարկային օրենսգրքում կատարված փոփոխություններով 2026թ. հուլիսի 1-ից վերանայվել են արտարժույթով արտահանված գործարքների և գործառնությունների հաշվառման կանոններ՝
 1. ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների մասով (բացառությամբ ներմուծման և արտահանման գործարքների) հարկման բազաների, եկամուտների և ձեռքբերման արժեքների որոշման համար հիմք ընդունել օրենսգրքով սահմանված հաշվառման մեթոդին համապատասխան դրանց համար հաշվառման ամսաթվի (ներկայումս սահմանված է հաշվարկային փաստաթղթի դուրս գրման ամսաթվի) դրությամբ ԿԲ հրապարակած միջին փոխարժեքը,
 2. արտարժույթի փոխանակման գործարքների մասով եկամուտների և ծախսերի հաշվարկը կատարել արտարժույթի փոխանակման ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը ձևավորված միջին փոխարժեքից,
 3. տրամադրված կամ ստացված կանխավճարների մասով առաջացած դեբիտորական և կրեդիտորական պարտքերի սկզբնական արժեքների որոշման համար հիմք ընդունել դրանց առաջացման ամսաթվի դրությամբ միջին փոխարժեքը,
 4. որպես տվյալ օրվա ԿԲ հրապարակած՝ միջին փոխարժեք հիմք է ընդունվում ԿԲ կողմից նախորդ աշխատանքային օրը հրապարակված միջին փոխարժեքը, իսկ արտարժույթի փոխանակման գործարքների մասով՝ ԿԲ կողմից այդ օրը հրապարակված միջին փոխարժեքը:

- 2026թ. հուլիսի 1-ից կանոնակարգվել են ապրանքի վերադարձի դեպքում գործարքի ճշգրտման հետ կապված հարցերը և գործարքի ճշգրտման հնարավորություն է նախատեսվել այն բոլոր դեպքերի համար, երբ գործարքի առարկա հանդիսացող ապրանքը ենթակա է վերադարձման: Ներմայումս գործարքի ճշգրտման հնարավորություն նախատեսված է միայն պիտանիության ժամկետ ունեցող ապրանքների համար և այն դեպքերի համար, երբ ապրանքների ընդունման պահին պարզվում է, որ ապրանքը չի համապատասխանում պայմանագրով սահմանված պայմաններին և այն ենթակա է վերադարձման:
- 2027թ. հունվարի 1-ից կանոնակարգվել են գործարքի ճշգրտման դեպքում գործարքի կողմեր համարվող հարկ վճարողների կողմից ճշգրտման արդյունքներն արտացոլելու այն դեպքերը, երբ ճշգրտման արդյունքում նվազում կամ ավելանում են նաև գործարքից հաշվարկված հարկման բազաները:
- 2026թ. հուլիսի 1-ից նախատեսվել է հաշվարկային փաստաթղթի չեղարկման այն դեպքը, երբ դուրս գրված հաշվարկային փաստաթղթում արտացոլված գործարքի առարկա հանդիսացող ապրանքի միավորի գինը կամ աշխատանքի, ծառայության սակագինը, ընդհանուր արժեքը գործարքի կողմերի միջև կնքված գրավոր պայմանագրով կամ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում ենթակա են փոփոխման:
- 2026թ. հուլիսի 1-ից կանոնակարգվելու է նաև ՀԴՄ կտրոններով ձեռքբերումների վերադարձի մասով գործարքների ճշգրտման դեպքում պարտավորություններն արտացոլելու հարցերը՝ նախատեսելով, որ ճշգրտումները արտացոլվում են ճշգրտման ժամանակաշրջանի համար ներկայացվող միասնական հաշվարկում, բացառությամբ՝ հարկի գումարների ավելացման դեպքերի, որոնք պետք է արտացոլվեն մատակարարումների օրը ներառող հաշվետու ժամանակաշրջանի միասնական հաշվարկում:
- 2026թ. հուլիսի 1-ից վաղեմության ժամկետով (գործարքի կատարման տարվան հաջորդող 3 տարի) պայմանավորված սահմանափակումը կիրառվելու է նաև դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի չեղարկման մասով:

-
- 2026թ. հուլիսի 1-ից հստակեցվել են գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվող հարկ վճարողների կողմից մինչև ԱԱՀ շեմը (115 մլն դրամ) ԱԱՀ-ի պարտավորությունների կատարմանը վերաբերող հարցերը: Առաջարկվող փոփոխությամբ նախատեսվում է սահմանել, որ՝
 1. գյուղատնտեսական արտադրանք արտադրողներ են համարվում օրենսգրքով սահմանված գյուղատնտեսական արտադրանք արտադրողները,
 2. գյուղատնտեսական արտադրանք արտադրողներն այդ արտադրանքի մատակարարման գործարքների մասով ԱԱՀ չեն հաշվարկելու և վճարելու, իսկ գյուղատնտեսական արտադրանք չհամարվող ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման և (կամ) ծառայությունների մատուցման գործարքների մասով՝ հաշվարկելու և վճարելու են ԱԱՀ:
 - Օրենսգրքի 88-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված են ԱՏԳ ԱԱ 2207 ծածկագրին դասվող՝ շալցված ապրանքների և ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող ապրանքների օտարման դեպքում օտարման նվազագույն գներ, իսկ օրենսգրքի 62-րդ հոդվածով՝ ԱԱՀ-ով հարկման նվազագույն բազայի որոշման կանոններ: 2026թ. հուլիսի 1-ից նշված կարգավորումները ճանաչվում են ուժը կորցրած:
 - Օրենսգրքի մինչև 04.07.2025թ. գործող խմբագրությամբ 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքներն ու գործառնությունները ներառել են աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը, իսկ նույն կետի կիրառության իմաստով ծառայության մատուցում է համարվել մասնավորապես՝ փոխառության տրամադրումը, ոչ նյութական ակտիվի օտարումը, ոչ նյութական ակտիվի օգտագործման տրամադրումը: Օրենսգրքում կատարված փոփոխություններով (ուժի մեջ են 04.07.2025թ.-ից) նախատեսվել է, որ նույն կետի կիրառության իմաստով ծառայության մատուցում է համարվում նաև ֆինանսական ակտիվի օտարումը: Այս փոփոխությամբ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվելու առումով ֆինանսական ակտիվների օտարումից բացառություն է կատարվել դրամական պահանջի իրավունքի զիջման մասով, որին տրվել է հետին ուժ՝ բացառությունը գործում է 04.07.2025թ.-ից: Միաժամանակ, նույն փոփոխությունը կատարվել է շրջանառության հարկով հարկման օբյեկտի մասով:
 - Օրենսգրքի 62-րդ և 109-րդ հոդվածներով շենքերի, շինությունների (այդ թվում՝ անավարտ, կիսակառույց), բնակելի կամ այլ տարածքների, հողամասերի օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան կամ օտարումից եկամուտը ոչ պակաս, քան անշարժ գույքի հարկով հարկման բազայի 80 տոկոսի չափով հաշվարկելու կանոնից բացառություն է կատարվել կառուցապատողի կողմից կառուցապատման իրավունքով կառուցված այն անավարտ, կիսակառույց շինությունների օտարման գործարքների համար, որոնց շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել կամ երկարաձգվել է: Նշված կարգավորմանը տրվել է հետին ուժ՝ տարածվում է 2023թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:
 - 2026թ. հուլիսի 1-ից հստակեցվել են ԱԱՀ-ից ազատված գործարքները, այսպես՝
 1. ԱԱՀ-ից ազատվում է Կառավարության սահմանած կարգով իրականացվող ոչ ֆորմալ կրթական ծրագրերի շրջանակներում ուսուցման ծառայությունների մատուցումը,
 2. ԱԱՀ-ից ազատման արտոնությունը կիրառվում է նաև համայնքներին նվիրատվությամբ ապրանքների մատակարարման մասով (ներկայումս ԱԱՀ-ից ազատվում է միայն պետությանը նվիրատվությունը, իսկ համայնքների նվիրատվության դեպքում ԱԱՀ-ից չի ազատվում և Կառավարության 12.01.2018թ. N402-Ն որոշմամբ հարկման բազան 0 դրամ է): Ընդ որում, Կառավարության որոշումների հիման վրա ԱԱՀ վճարողների կողմից նվիրատվության ձևով պետությանը կամ համայնքին ապրանքի մատակարարման գործարքների մասով ԱԱՀ-ից ազատված գործարքներին առնչվող հաշվանցումների սահմանափակումները չեն գործում,
 3. ներկայումս ԱԱՀ-ից ազատման արտոնություն է սահմանված պետական կառավարման մարմինների և (կամ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից այն ծառայությունների մատուցման մասով, որոնց համար օրենքով սահմանված է պետական տուրքի և (կամ) տեղական տուրքի վճարում: Սահմանվել է, որ արտոնությունը գործում է անկախ այն հանգամանքից, թե ում կողմից է մատուցվում ծառայությունը, միաժամանակ հստակեցվել է, որ արտոնությունը գործում է համապատասխանաբար վճարվող պետական տուրքի կամ տեղական տուրքի մասով,
 4. հստակեցվել է, որ օտարերկրյա զբոսաշրջիկին մատուցվող զբոսաշրջության ոլորտի ծառայություններն ազատվում են ԱԱՀ-ից, եթե մատուցվում են զբոսաշրջային օպերատորի կամ զբոսաշրջային գործակալի կողմից:
-

-
- 2027թ. հունվարի 1-ից սահմանվում է, որ ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման պարտավորությունը կրում է հարկային մարմնում հաշվառված՝ ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը, եթե պայմանագրային հարաբերությունների կողմը ԱԱՀ վճարող չհամարվող կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր է (գործող կարգավորումները սահմանված են այն դեպքերի համար, երբ գործարքի կողմերը շրջանառության հարկ վճարողներ են կամ միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ) կամ ՀՀ-ում մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունը մատուցում է էլեկտրոնային ծառայություններ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին: Մշտական հաստատություն չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունների հաշվարկման համար կիրառվելու են նույն կարգավորումները՝ հաշվետու ժամանակաշրջանի, հարկի վճարման ու հարկային հաշվարկների ներկայացման ժամկետների առումով:
 - 2027թ. հունվարի 1-ից բացի այն դեպքերից, երբ հաշվարկային փաստաթուղթը չեղարկվել է այլ անձին անվամբ դուրս գրվելու կամ սահմանափակումներից որևէ մեկի խախտմամբ դուրս գրվելու հիմքերով, չեղարկման մնացած դեպքերում չեղարկված հարկային հաշվի փոխարեն՝
 1. ձեռքբերողի կողմից վավերացված նոր հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարն արտացոլվում է այն հաշվետու ժամանակաշրջանի միասնական հաշվարկով, որում օրենսգրքի 71-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կանոնով հաշվանցման (պակասեցման) ենթակա կլիներ չեղարկված հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը:
 2. ԱԱՀ վճարող համարվողի կողմից դուրս գրված՝ նոր հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարն արտացոլվում է այն հաշվետու ժամանակաշրջանի միասնական հաշվարկով, որում օրենսգրքի 71-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվանցման (պակասեցման) ենթակա կլիներ չեղարկված հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը:
 - 2027թ. հունվարի 1-ից վերանայվել է ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծող՝ ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա՝ ակցիզային հարկով հարկման ենթակա՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար ակցիզային հարկի գումարները մաքսային մարմիններին վճարելու հետ կապված դրույթը և նախատեսվել է, որ այդ գումարները ևս պետական բյուջե պետք է վճարվեն մինչև ապրանքները ՀՀ տարածք ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:
 - 2026թ. հուլիսի 1-ից նախատեսվել է, որ շահութահարկով հարկման բազան որոշելիս ակտիվների ձեռքբերումից հետո դրանց սկզբնական կամ հաշվեկշռային արժեքները չեն փոփոխում ոչ թե միայն 73-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, այլ 73-րդ հոդվածի բոլոր մասերով սահմանված ԱԱՀ-ի գործարքների ճշգրտումները: Շահութահարկ վճարողի համար եկամուտ կհամարվեն արդեն օրենսգրքի 73-րդ հոդվածի (ոչ թե միայն 4-րդ մասի) համաձայն, հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարներին ավելացվող գումարները, եթե այդ գումարները շահութահարկով հարկման նպատակով ճանաչվել են որպես համախառն եկամտից նվազեցում: Շահութահարկ վճարողի համար ծախս կհամարվեն արդեն օրենսգրքի 73-րդ հոդվածի (ոչ միայն 2-րդ մասի) համաձայն՝ հաշվանցման (պակասեցման) ենթակա ԱԱՀ-ի գումարներից նվազեցվող գումարները, եթե նույն մասում նշված ակտիվների գծով ծախսերը հարկման բազայի որոշման նպատակով ենթակա են համախառն եկամտից նվազեցման:
 - 2026թ. հուլիսի 1-ից սահմանվել է, որ շահութահարկ վճարողի կողմից իր բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայաբաժինների ոչ միայն տեղաբաշխման, այլ նաև օտարման դեպքում տեղաբաշխման (օտարման) գնի և անվանական արժեքի դրական տարբերությունը եկամուտ չի համարվում:
 - 2026թ. հուլիսի 1-ից հստակեցվել են տոկոսների մասով եկամտի հաշվեգրման կարգավորումները՝ սահմանելով հայեցողություն տոկոսների տեսքով եկամտի հաշվեգրման մասով՝ նախատեսելով, որ տոկոսների տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված կամ տոկոսների հաշվարկման յուրաքանչյուր օրվա դրությամբ կամ պարտքի ժամկետը լրանալու պահից:
 - 2026թ. հուլիսի 1-ից եկամուտ կհամարվեն նաև արտարժույթի փոխանակման գործարքներ իրականացնելիս արտարժույթի վաճառքի կամ ձեռքբերման ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից տարբերվող այլ փոխարժեքի կիրառման արդյունքում ստացվող եկամուտները: Միաժամանակ, ծախս կհամարվեն արտարժույթի փոխանակման գործարքներ իրականացնելիս արտարժույթի վաճառքի կամ ձեռքբերման ամսաթվի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից տարբերվող այլ փոխարժեքի կիրառման արդյունքում կատարվող ծախսերը:
-

- 2026թ. հուլիսի 1-ից վերանայվել է ինքնավար էներգաարտադրողների կողմից ներտնտեսական նպատակներով օգտագործվող էլեկտրաէներգիայի արտադրության հետ կապված ծախսերի նվազեցումը սահմանափակող դրույթը: Սահմանվում է, որ էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին մատակարարված էլեկտրական էներգիայի դիմաց հավասար փոխհոսքերի տեսքով ստացվող էլեկտրական էներգիայի սկզբնական արժեքը որոշվում է ինքնավար էներգաարտադրողի կողմից մատակարարված էլեկտրական էներգիայի արտադրության համար կատարված ծախսերի չափով:
- 2026թ. հուլիսի 1-ից հստակեցվել են ներայացուցչական ծախսերը՝ հարկման բազան որոշելիս ներկայացուցչական ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են հարկային տարվա համախառն եկամտի 0.5 տոկոսը չգերազանցող չափով, բայց ոչ ավելի հինգ միլիոն դրամը, բացառությամբ պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման հարկային տարվա, երբ հարկման բազան որոշելիս համախառն եկամտից չի նվազեցվում ներկայացուցչական ծախսերի այն մասը, որը գերազանցում է հինգ միլիոն դրամը:
- 2026թ. հուլիսի 1-ից վերանայվել են դրոշմավորման ենթակա կաթնամթերքի գծով որակական կորուստների՝ համախառն եկամտից նվազեցման նորման՝ սահմանելով, որ նվաճ կորուստը համախառն եկամտից ենթակա է նվազեցման համախառն եկամտի 2%-ը չգերազանցող չափով,
- 2026թ. հուլիսի 1-ից ոչ ռեզիդենտին վճարվող եկամուտներից շահութահարկով հարկման օբյեկտի հաշվառման հաշվառման դրամարկղային մեթոդի շրջանակներում եկամտի վճարում է համարվելու հարկային գործակալի նկատմամբ առկա՝ եկամտի ստացման պահանջի իրավունքի այլ անձին զիջումը (գործող կարգավորումներով նախատեսված է հարկային գործակալ չհանդիսացող անձին զիջումը): Միաժամանակ, հստակեցվել է, որ վճարում է համարվում եկամտի ստացման պահանջի ներումը ոչ ռեզիդենտին:
- 2026թ. հուլիսի 1-ից վերանայվում են դրամարկղային մեթոդով ֆիզիկական անձանց եկամուտների հաշվառման կարգավորումները՝ մոտարկելով ոչ ռեզիդենտների համար սահմանված կարգավորումներին: Եկամտային հարկով հարկման օբյեկտի դրամարկղային մեթոդով հաշվառումն իրականացվելու է օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, բացառությամբ շահաբաժինների մասով եկամուտների հաշվառման: Այսպիսով, հարկի հաշվարկման համար հիմք հանդիսացող՝ եկամտի վճարում են համարվելու՝

1. կանխիկ կամ անկանխիկ փողային վճարումը, այդ թվում՝ մաս-մաս կատարված վճարումը՝ անկախ եկամտի ստացման իրավունքը ծագած լինելու հանգամանքից.
2. այլ գույքով հատուցումը.
3. դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոխադարձ հաշվանցումը (մարումը).
4. պարտքերի վերաձևակերպումը կամ նորացումը.
5. հարկային գործակալի նկատմամբ առկա՝ եկամտի ստացման պահանջի իրավունքի՝ այլ անձին զիջումը.
6. եկամտի ստացման պահանջի ներումը ոչ ռեզիդենտին:

- Անցումային դրույթներ են սահմանվել ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու կարգավորումների կիրառման առումով (տարածվում է 2022թ. հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ)՝
 1. եթե հարկ վճարողը 2022-2025թթ. որևէ տարվա ընթացքում դադարել է համարվել որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ կամ շրջանառության հարկ վճարող, կամ ոչ առևտրային կազմակերպությունը կամ գյուղատնտեսական արտադրանք արտադրողը որևէ տարվա ընթացքում գերազանցել է ԱԱՀ-ի շեմը, սակայն չի ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն և չի հաշվառվել ԱԱՀ վճարող, կարող է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 21-ը ներառյալ դիմել հարկային մարմին՝ հայտարարությունը ներկայացնելու հնարավորություն տալու մասին: Դիմումը ներկայացվում է թղթային կրիչով կամ էլեկտրոնային փոստով՝ հարկային մարմնի սահմանած ձևին համապատասխան:
 2. Դիմումի հիման վրա մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրած հարկ վճարողը համապատասխան ժամկետներից սկսած հարկային մարմնի կողմից հաշվառվում է որպես ԱԱՀ վճարող:
 3. Հարկային մարմնի կողմից որպես ԱԱՀ վճարող չհաշվառելու հիմքով վարչական ակտերով առաջադրված ԱԱՀ-ի պարտավորությունները ենթակա են վերահաշվարկման: Ենթակա են վերահաշվարկման նաև դատական կարգով բողոքարկված վարչական ակտերով հարկային մարմնի կողմից որպես ԱԱՀ վճարող չհաշվառելու հիմքով առաջադրված ԱԱՀ-ի պարտավորությունները, այդ թվում՝ գործն ըստ էության լուծող՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության դեպքում:

- «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով հստակեցվել է, որ ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցը չի կիրառվում Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերից տարբերվող բնակավայրերում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված՝ բնակարանների, բազմաբնակարան բնակելի շենքի ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված ավտոտնակների, հասարակական և արտադրական նշանակության շինությունների նկատմամբ, եթե տվյալ բազմաբնակարան բնակելի շենքի շինարարության թույլտվության ժամկետն ավարտվել կամ երկարաձգվել է: Նշված դեպքերում ավարտվածության աստիճանը բնութագրող գործակիցը սահմանվում է 1.0, և գնահատությունն իրականացվում է ըստ բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված նախագծային բնակարանների, բազմաբնակարան բնակելի շենքի ոչ բնակելի տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքում տեղակայված ավտոտնակների, հասարակական և արտադրական նշանակության շինությունների:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-192-Ն (ընդունված՝ 11.05.2026թ., ուժի մեջ՝ 15.05.2026թ.)

- Առանցքային փոփոխությամբ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք են ստանում ընկերությունից պահանջել իրենց բաժնետոմսերի հետգնում մի շարք նոր դեպքերում:
- Մասնավորապես, հետգնման պահանջ կարող է ներկայացվել, եթե ընկերության կամ դրա վերահսկող բաժնետիրոջ որոշումները, գործողությունները կամ անգործությունը հանգեցնում են ակնհայտ անբարենպաստ հետևանքների փոքր բաժնետերերի համար կամ վերահսկող բաժնետիրոջը տալիս են անհամաչափ առավելություն: Պաշտպանական մեխանիզմներ են ներդրվում նաև կառավարման թափանցիկության համար. հետգնման իրավունք է առաջանում, եթե վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարի չի գումարվել տարեկան ընդհանուր ժողով, չեն հաստատվել հաշվետվություններն ու շահույթների բաշխումը, կամ եթե ընկերությունը վերջին հինգ տարում չի վճարել շահաբաժիններ (կամ վճարել է աննշան գումարներ՝ Կենտրոնական բանկի բանկային տոկոսի հաշվարկային դրույքի համեմատ):
- Ներդրվում է «վերահսկող բաժնետիրոջ» հասկացությունը, որը վերաբերում է ձայների 50 և ավելի տոկոսին ուղղակի կամ անուղղակիորեն տիրապետող կամ ընկերության որոշումները կանխորոշող անձին:

- Բացի այդ, սահմանվում է, որ բաժնետոմսերի շուկայական արժեքի գնահատում կարող են իրականացնել միայն Կառավարության չափանիշներին համապատասխանող անձինք: Այս կարգավորումները տարածվելու են նաև արդեն հիմնադրված ընկերությունների վրա, իսկ օրենքն ուժի մեջ է մտնելու պաշտոնական հրապարակումից մեկ ամիս հետո:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-200-Ն (ընդունված՝ 06.05.2026թ., ուժի մեջ՝ 01.07.2026թ.)

- Օրենսգրքի 62-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված են ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման կանոնները՝ հարկման բազա է համարվում գործարքի իրական արժեքի 80 տոկոսը, բացառությամբ հրապարակային սակարկության միջոցով իրականացվող գործարքների, ինչպես նաև այն գործարքների, որոնք իրականացվում են հարկ վճարողի կողմից նախապես ընդունված գրավոր ակտում նշված կամ նախապես ընդունված այլ իրավական ակտում նշված առևտրային զեղչի չափով պակաս արժեքով, և այդ առևտրային զեղչը այդ ակտերով սահմանված ժամանակահատվածում արտացոլվում է հարկ վճարողի կողմից դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերում: Այս կանոններից բացառություն է սահմանվել հետևյալ դեպքերի համար:
- Թրեյդ-ին առևտրի իրականացման լիցենզիա ունեցող կազմակերպության կողմից ֆիզիկական անձից ձեռք բերված ավտոտրանսպորտային միջոցը հետագայում ֆիզիկական անձին օտարելու դեպքում ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում օտարման ժամանակ հաշվարկվող հարկման բազայի և ձեռքբերման գնի դրական տարբերությունը: 2026թ. հուլիսի 1-ից սկսած՝ այս գործարքների վրա չեն տարածվի 62-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված բացառությունները, և անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում ԱԱՀ-ով հարկման բազան կորոշվի գործարքների իրական արժեքի 80 տոկոսի և ձեռքբերման գնի դրական տարբերության չափով (առևտրային զեղչերի չափով հարկման բազայի նվազեցումներ չեն կատարվի), իսկ գործարքի իրական արժեքը կորոշվի նույն հոդվածով սահմանված ընդհանուր կանոններով:
- Օրենսգրքի 62-րդ հոդվածով սահմանված ԱԱՀ-ով հարկման բազայի որոշման առանձնահատկությունները լրացվում են ոսկուց, այդ թվում՝ ոսկուց և թանկարժեք քարերից պատրաստված իրերի օտարման դեպքում ԱԱՀ-ով հարկման բազայի հաշվարկման նոր կանոններով:

• Մասնավորապես՝

1. արտադրողի կողմից իրականացված օտարման գործարքների մասով հարկման բազա է համարվում ընդհանուր կարգով հաշվարկվող հարկման բազայի, իսկ անհատույց կամ իրական արժեքից էականորեն ցածր արժեքով հատուցմամբ գործարքների դեպքում՝ դրանց իրական արժեքի 80 տոկոսի և օրենսգրքով սահմանված փաստաթղթերով հիմնավորված՝ տվյալ իրի արտադրության համար օգտագործված ոսկու և թանկարժեք քարերի ձեռք բերման գնի դրական տարբերությունը: Նշված կարգով հաշվարկվող բազան չի կարող պակաս լինել ընդհանուր կարգով հաշվարկվող բազայի կամ վերոնշյալ գործարքների իրական արժեքի 80 տոկոսի 10 տոկոսից:
2. առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող անձանց կողմից իրականացված օտարման գործարքների մասով ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում հաշվարկվող հարկման բազայի կամ իրական արժեքի 80 տոկոսի և օրենսգրքով սահմանված փաստաթղթերով հիմնավորված՝ տվյալ իրի ձեռք բերման գնի (ներառյալ՝ ԱԱՀ-ն) դրական տարբերությունը:
3. լրացվել են նաև օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հաշվանցումների սահմանափակումները՝ ԱԱՀ-ի հաշվանցումներ (պակասեցումներ) չեն կատարում ոսկուց (այդ թվում՝ ոսկուց և թանկարժեք քարերից) պատրաստված իրերի առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող անձինք՝ այդ իրերի օտարման գործարքներին (բացառությամբ ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկման ենթակա գործարքների) վերագրվող՝ այդ իրերի ձեռքբերման հարկային հաշվում կամ ներմուծման մաքսային հայտարարագրում կամ ներմուծման հարկային հայտարարագրում առանձնացված ԱԱՀ-ի գումարի չափով:
- Օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հուլիսի 1-ից: Անցումային դրույքների համաձայն՝ այն տարածվում է 2026 թվականի հուլիսի 1-ից հետո կատարվող՝ ոսկուց (այդ թվում՝ ոսկուց և թանկարժեք քարերից) պատրաստված իրերի օտարման գործարքների, ինչպես նաև այդ գործարքներին վերագրվող՝ ձեռքբերումների գծով հարկային հաշվում կամ ներմուծման մաքսային հայտարարագրում կամ ներմուծման հարկային հայտարարագրում առանձնացված ԱԱՀ-ի գումարի մասով: Ընդ որում, առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող անձանց համար ԱԱՀ-ով հարկման բազայի հաշվարկման նպատակով մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը ձեռք բերված օրենսգրքով սահմանված փաստաթղթերով հիմնավորված՝ ոսկուց (այդ թվում՝ ոսկուց և թանկարժեք քարերից) պատրաստված իրի ձեռքբերման գնի մեջ ԱԱՀ-ի գումարը չի ներառվում:

Անձը հաստատող փաստաթղթի մասին և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-210-Ն (ընդունված՝ 11.05.2026թ., ուժի մեջ՝ 22.05.2026թ.)

- «Անձը հաստատող փաստաթղթի մասին» օրենքով և հարակից օրենքներում փոփոխությունների փաթեթով անձը հաստատող փաստաթղթի հետ կապված հիմնական հարաբերությունները կկարգավորվում է մեկ միասնական օրենքով, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում անձը հաստատող փաստաթղթերի տեսակները, դրանց տրամադրման, մերժման, անվավեր ճանաչելու և կենսաչափական տվյալների մշակման իրավական հիմքերը: Ըստ օրենքի՝ հիմնական փաստաթղթերն են քաղաքացու անձնագիրը, որը նախատեսված է Հայաստանից դուրս գալու և վերադառնալու համար, և նույնականացման քարտը, որն օգտագործվում է երկրի տարածքում: Բացի այդ, անձը հաստատող փաստաթղթերի շարքին են դասվում դիվանագիտական անձնագիրը, օտարերկրացիների կացության քարտերը, փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց վկայականներն ու ճամփորդական փաստաթղթերը: Նոր կարգավորմամբ՝ այս փաստաթղթերը պարունակում են տվյալների էլեկտրոնային պահոց, որտեղ ներառվում են անձի կենսաչափական տվյալները՝ լուսանկարը, ստորագրությունը և մատնադրոշմները: Մատնադրոշմները վերցվում են 6 տարեկանից, ստորագրությունը՝ 16 տարեկանից, իսկ լուսանկարը՝ անկախ տարիքից:
- Փաստաթղթերի տրամադրման գործընթացն իրականացվելու է էլեկտրոնային միասնական հարթակի միջոցով, որի կառավարիչը Միգրացիայի և քաղաքացիության բնագավառի պետական լիազոր մարմինն է: Համակարգը ինքնաշխատ կերպով ստուգելու է դիմողի ներկայացրած տվյալների համապատասխանությունը բնակչության պետական ռեգիստրին: Անձը հաստատող փաստաթուղթ ստանալու համար 16 տարին լրացած անձինք դիմում են անձամբ, իսկ մինչև 16 տարեկանների կամ անգործունակների դեպքում՝ օրինական ներկայացուցչի միջոցով: Տրամադրման ժամկետը սովորաբար կազմում է 14 աշխատանքային օր, իսկ օտարերկրյա պետությունում դիմելիս՝ 14-ից մինչև 45 աշխատանքային օր: Կառավարությունը կարող է սահմանել նաև լրացուցիչ վճարի դիմաց ավելի սեղմ ժամկետներում կամ անձի բնակության վայրում կենսաչափական տվյալների հավաքագրման հնարավորություն:
- Ըստ նոր օրենքի՝ կացության հատուկ կարգավիճակ ստացած անձանց այլևս չի տրվելու «հատուկ անձնագիր»: Դրա փոխարեն նրանց տրամադրվելու է կացության քարտ, որտեղ հատուկ նշում է կատարվելու անձի՝ կացության հատուկ կարգավիճակ ունենալու վերաբերյալ:

- Մինչև օրենքի ուժի մեջ մտնելը տրված հատուկ անձնագրերը շարունակելու են գործել իրենց վավերականության ամբողջ ժամկետում: Եթե այդ ժամկետի ընթացքում անձը դիմի նոր փաստաթուղթ ստանալու համար, նրան արդեն կհատկացվի վերը նշված նոր կացության քարտը:
- Նոր օրենքն ուժի մեջ է մտնելու էլեկտրոնային միասնական հարթակի գործարկման մասին հայտարարությանը հաջորդող տասներորդ օրը, բայց ոչ ուշ, քան 2026 թվականի նոյեմբերի 1-ը: Մինչ այդ տրված անձը հաստատող փաստաթղթերը շարունակելու են գործել մինչև դրանց վավերականության ժամկետի ավարտը:
- Օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են ճանաչվում «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» և «Նույնականացման քարտերի մասին» օրենքները:

«Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-221-Ն և «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՕ-222-Ն (ընդունված՝ 07.05.2026թ., ուժի մեջ՝ 30.05.2026թ.)

- «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում կատարված փոփոխություններով օրենքի կարգավորումներից հանվում է քաղաքացիական իրավական պայմանագրին համապատասխան աշխատանքներ կատարող վարձու աշխատողների համար պետական աջակցության տրամադրմանն առնչվող կարգավորումները:
- Օրենքում վերաշարադրվում է նոր աշխատողի հասկացությունը, ըստ որի՝ նոր աշխատողը մասնագիտական աշխատանք կատարող այն վարձու աշխատողն է, որն աշխատանքի ընդունման տարվան նախորդող 4 տարիների ընթացքում բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող գործատուի մոտ վարձու աշխատող չի հանդիսացել, իսկ բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող գործատուի մոտ աշխատանքի է ընդունվել 2024 թվականի դեկտեմբերի 31-ից հետո:
- Օրենքով սահմանված դեպքերում ու կարգով աջակցության իրավունք է վերապահվում նաև օտարերկրյա իրավաբանական անձի՝ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մասնաճյուղին կամ ներկայացուցչությանը: կամ ներկայացուցչություն,
- Վերանայվել են պետական կարգավորումներն ու ընթացակարգերը, մասնավորապես՝ աջակցության ենթակա գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին պետական աջակցությունը տրամադրվում է՝

1. նոր աշխատողներ ներգրավելու համար՝ նրանց աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվարկված եկամտային հարկի գումարի 60 տոկոսի չափով: Նոր աշխատողի կարգավիճակը պահպանվում է նոր աշխատողին օրենքի իմաստով մասնագիտական աշխատանքի ընդունման ամսվա 1-ից սկսած՝ օրացուցային օրերով հաշվարկված երրորդ տարին լրանալու օրը ներառող ամսվա վերջին օրը ներառյալ:

2. աջակցության ենթակա գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական աշխատանք կատարող կադրերի պատրաստման և վերապատրաստման (այսուհետ՝ վերապատրաստում) համար՝ վերապատրաստում անցած մասնագիտական աշխատանք կատարող վարձու աշխատողի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվետու ժամանակաշրջանում հաշվարկված եկամտային հարկի գումարի 50 տոկոսի չափով:

- Աջակցության տրամադրման համար հիմք հանդիսացող աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների հաշվարկման, փոփոխության, ինչպես նաև աշխատանքային միգրանտին պետական աջակցության գումարները չփոխանցելու ռիսկը կրում է տնտեսավարող սուբյեկտը:
- Աջակցության տրամադրման ժամանակ Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1.1-ին մասով հարկային արտոնությունից (եկամտային հարկի 10 տոկոս դրույքաչափ) օգտվող վարձու աշխատողների մասով աջակցության չափի հաշվարկման հիմքում հաշվետու ժամանակաշրջանում հաշվարկված եկամտային հարկի գումարի փոխարեն կիրառվում է նույն ժամանակաշրջանի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 20 տոկոսին համարժեք մեծությունը:
- Աջակցությունը տրամադրվում է հարկման ընդհանուր համակարգում և շրջանառության հարկի համակարգում գործող տնտեսավարող սուբյեկտներին՝ 2025թ. հունվարի 1-ից մինչև 2031թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար: Շրջանառության հարկի համակարգում գործող տնտեսավարող սուբյեկտները, ինչպես նաև վերջիններիս աշխատանքային միգրանտները պետական աջակցությունից օգտվելն սկսելու օրացուցային տարվան հաջորդող երրորդ օրացուցային տարին լրանալուց հետո կարող են շարունակել օգտվել պետական աջակցությունից, եթե տվյալ տնտեսավարող սուբյեկտը գործում է հարկման ընդհանուր համակարգում:

- Պետական աջակցության տրամադրման բավարարման դեպքում աջակցությունն ստացողի, իսկ աշխատանքային միգրանտի դեպքում միջնորդի և լիազոր մարմնի միջև կնքվում է պայմանագիր, իսկ մերժման դեպքում հարթակով դիմողին է ներկայացվում պետական աջակցության տրամադրման մերժման մասին վարչական ակտը՝ լիազոր մարմնի գրության տեսքով:
- Օրենքն ուժի մեջ է մտնում 30.05.2026թ. և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից սկսվող հաշվետու ժամանակաշրջանների վրա: Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տնտեսավարող սուբյեկտը կարող է դիմել պետական աջակցության համար 2025թ. հունվարի 1-ից հետո բարձր տեխնոլոգիաների ոլորտ մուտք գործած նոր աշխատողի համար, եթե տվյալ նոր աշխատողի նախկին գործատու տնտեսավարող սուբյեկտն իր մասով չի ստացել պետական աջակցություն:
- Ուժը կորցրած է ճանաչվում «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-206-Ն (ընդունված՝ 06.05.2026թ., ուժի մեջ՝ 04.06.2026թ.)

- Նախատեսվում է գաղտնի քննչական գործողությունների շարքում կատարել լրացում և նախատեսել վերահսկելի մատակարարումը և գնումը, որը ապրանքների և ծառայությունների շրջանառության վերահսկումն է՝ ապրանքներն ու ծառայությունները գնելու կամ այդպիսիք վաճառելու միջոցով:

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-207-Ն, ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին ՀՕ-208-Ն, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՕ-209-Ն (ընդունված՝ 06.05.2026թ., ուժի մեջ՝ 08.06.2026թ.)

- ՀՀ հարկային օրենսգրքում կատարված փոփոխություններով կամերալ (ներքին) ուսումնասիրության շրջանակները ուսումնասիրության և վերլուծության առումով հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկների և տեղեկությունների հետ միասին ներառելու է նաև հարկային մարմնին հայտնի դարձած այլ տեղեկությունները. գործող կարգավորումներով հարկային մարմնի կողմից թեմատիկ ուսումնասիրության իրականացման համար հիմք կարող են հանդիսանալ հարկային մարմնի իրականացրած բացառապես կամերալ (ներքին) ուսումնասիրության՝ հաստատապես հայտնի հարկվող գործարքների վերաբերյալ արդյունքները: Այս կարգավորումից հանվել է «հաստատապես հայտնի» եզրույթը. ներկայումս յուրաքանչյուր հարկ վճարողի մասով թեմատիկ ուսումնասիրությունների հանձնարարագիր կարող է հրապարակվել ոչ ավելի, քան յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում մեկ անգամ: Նշված սահմանափակումը այլևս չկա, և թեմատիկ ուսումնասիրություն կարող է իրականացվել համապատասխան հիմքերի առկայության դեպքում:
- Ներկայումս ՀՀ քրեական օրենսգրքով հարկերը, տուրքերը կամ այլ պարտադիր վճարները չկատարելու համար քրեական պատասխանատվություն է նախատեսված 10 միլիոն դրամը (խոշոր) և 20 միլիոն դրամը (առանձնապես խոշոր) գերազանցելու դեպքում: Փոփոխությամբ վերանայվել են վերոնշյալ չափերը: Խոշոր չափ է համարվում մեկ հարկային տարվա ընթացքում 30 միլիոն դրամը գերազանցող հարկերի, տուրքերի կամ այլ վճարների գումարը, կամ իրար հաջորդող երկու հարկային տարիների ընթացքում 45 միլիոն դրամը գերազանցող հարկերի, տուրքերի կամ այլ վճարների գումարը: Առանձնապես խոշոր չափ է համարվում մեկ հարկային տարվա ընթացքում 50 միլիոն դրամը գերազանցող հարկերի, տուրքերի կամ այլ վճարների գումարը, կամ իրար հաջորդող երկու հարկային տարիների ընթացքում 75 միլիոն դրամը գերազանցող հարկերի, տուրքերի կամ այլ վճարների գումարը:
- Միաժամանակ, ներկայումս հաճախ խնդիր է առաջանում, երբ հարկային մարմինը վարչական վեճի ընթացքում միանգամից քրեական հաղորդում է տալիս, մինչդեռ վարչական ակտը դեռ կարող է բողոքարկվել և անվավեր ճանաչվել: Գործնականում հարկային մարմինը քրեական վարույթ նախաձեռնելու հաղորդում կներկայացնի այն դեպքում, երբ վարչական ակտը մտել է ուժի մեջ և սպառվել են վարչական բողոքարկման բոլոր փուլերը:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին ՀՕ-199-Ն (ընդունված՝ 06.05.2026թ., ուժի մեջ՝ 31.05.2026թ.)

- Նախատեսվում են խիստ սահմանափակումներ պետական և համայնքային բժշկական կազմակերպությունների գործադիր մարմնի ղեկավարների համար, որոնց արգելվում է զբաղեցնել այլ պաշտոններ կամ իրականացնել վճարովի այլ աշխատանք, բացառությամբ գիտական, մանկավարժական և ստեղծագործական գործունեության: Որպես բացառություն՝ նախատեսվում է, որ հոգեկան առողջության կենտրոնների տնօրենները կարող են շարունակել իրենց բժշկական պրակտիկան որպես հոգեբույժ, իսկ այլ հաստատությունների ղեկավարները՝ որպես թերապևտ, մանկաբույժ կամ ընտանեկան բժիշկ: Ղեկավարներին նաև արգելվում է անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, ստանալ նվերներ՝ կապված իրենց պարտականությունների հետ, կամ հանդես գալ որպես երրորդ անձանց ներկայացուցիչ իրենց նշանակող մարմնի հետ հարաբերություններում:
- Նախատեսվում է նաև, որ տնօրենները պարտավորվում են ապահովել հաստատության զարգացման ծրագրերի կատարումը և լիազոր մարմիններին պարբերաբար ներկայացնել հստակ հաշվետվություններ: Այս պարտավորությունները չկատարելը կամ սահմանված կարգի խախտմամբ հաշվետվություններ ներկայացնելը դառնում է իրավական հիմք աշխատանքային պայմանագիրը լուծելու կամ կարգապահական տույժեր կիրառելու համար:
- Բացի այդ, ներդրվում են տարբերակված պահանջներ տնօրենների թեկնածուների համար՝ կախված այն հանգամանքից, թե տվյալ բժշկական կենտրոնը քանի բնակչի է սպասարկում: Մեծ թվով բնակչություն սպասարկող հաստատությունների դեպքում պահանջվում է ավելի երկարատև ղեկավարման ստաժ և բարձրագույն կրթություն, իսկ փոքր բնակավայրերում սպասարկող հաստատությունների համար պահանջները համապատասխանաբար մեղմացվում են: Վերջնականապես հստակեցվում են այն իրավական արգելքները, որոնց առկայության դեպքում անձը չի կարող զբաղեցնել ղեկավար պաշտոն, ներառյալ դատվածությունը, սնանկությունը, դատական կարգով անգործունակ ճանաչվելը կամ հանրային ծառայությանը խոչընդոտող հիվանդությունների առկայությունը:

«Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-228-Ն, «Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին ՀՕ-229-Ն և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում կատարելու մասին ՀՕ-230-Ն (ընդունված՝ 11.05.2026թ., ուժի մեջ՝ 04.12.2026 թ.)

- Սահմանվում է էներգիայի պահեստավորումը՝ որպես արտադրված էլեկտրաէներգիայի օգտագործման հետաձգում կամ դրա վերափոխում կուտակելի ձևի՝ հետագա օգտագործման համար: Այն սահմանվում է նաև որպես լիցենզավորման ենթակա գործունեության նոր տեսակ՝ ներառելով կայանի կառուցման և պահեստավորման փուլերը: Լիցենզիա ունեցող անձինք կարող են կառուցել կամ վերակառուցել պահեստավորման կայաններ, մեծածախ շուկայում գնել և վաճառել էլեկտրաէներգիա և մատուցել պահեստավորման ծառայություններ:
- Միաժամանակ, մինչև 1 ՄՎտ հզորությամբ կայաններում պահեստավորումը, ինչպես նաև 1 ՄՎտ-ից ավելի հզորությամբ կայաններում բացառապես սեփական կարիքների համար իրականացվող գործունեությունը չի լիցենզավորվում: Նման սուբյեկտներն օրենքի ուժով դառնում են էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցներ: Լիցենզիաները կարող են տրամադրվել երաշխիքով կամ առանց դրա, այդ թվում՝ մրցույթի միջոցով: Սահմանվում են նաև սահմանափակումներ, ըստ որոնց հաղորդման և բաշխման լիցենզիա ունեցող անձինք չեն կարող զբաղվել պահեստավորմամբ՝ բացառությամբ հատուկ դեպքերի: Նախատեսվում է ֆինանսական երաշխիքների ներկայացում լիցենզիա ստանալու և ժամկետների երկարաձգման համար. պարտավորությունների չկատարման դեպքում դրանք կարող են փոխանցվել պետական բյուջե, բացառությամբ անհաղթահարելի ուժի դեպքերի: Վերականգնվող էներգիայի ոլորտում որոշ դեպքերում լիցենզիա ստանալու համար պահանջվում է հրաժարվել էլեկտրաէներգիայի գնման պետական երաշխիքից, որը հետագայում չի կարող վերականգնվել:
- «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանվում են էներգիայի պահեստավորման գործունեության համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը, որոնք տարբերակվում են ըստ կայանի կյանքի ցիկլի փուլերի և հզորության.
 1. Էլեկտրաէներգետիկական համակարգում նոր պահեստավորող հզորությունների կառուցման կամ վերակառուցման ժամանակահատվածի համար՝ տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով.
 2. պահեստավորման գործունեության փուլի համար ելնելով կայանի դրվածքային հզորությունից, օրինակ՝ մինչև 15 մեգավատ հզորություն ունեցող կայանների համար՝ տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով:

ՄԱՅԻՍ ԱՄՍԻՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՕՐԵՆՔՆԵՐ*

«Ավտոտրանսպորտային
օգտագործումից
պատասխանատվության
ապահովագրության
մասին» օրենքում
փոփոխություններ և լրացում կատարելու
մասին ՀՕ-104-Ն (ընդունված 25.03.2026թ.,
ուժի մեջ՝ 17.05.2026թ.)

- Նախատեսվող փոփոխություններով
առաջարկվում է որպես
ավտոտրանսպորտային միջոց սահմանել նաև
մոպեդները, տրիցիկլները և քվադրիցիկլները,
ինչպես նաև համալրվում է պարտադիր
ապահովագրման ոչ ենթակա
տրանսպորտային միջոցներից բխող
պատասխանատվությունը:

- Մասնավորապես պարտադիր
ապահովագրման ենթակա չի լինի այն
ավտոտրանսպորտային միջոցների
օգտագործումից բխող
պատասխանատվությունը, որոնց շարժիչի
առավելագույն ծավալը և զարգացած
առավելագույն արագությունը կամ շարժիչի
առավելագույն հզորությունը և զարգացած
առավելագույն արագությունը չեն
գերազանցում ՀՀ կառավարության սահմանած
կարգով պետական գրանցման ենթակա
լինելու համար նախատեսված
սահմանաչափը:

*Սույն բաժինը ներառում է այն օրենքները, որոնք ընդունվել են ավելի վաղ, սակայն ուժի մեջ են մտնում մայիս ամսին: Մայիս ամսին
ընդունված և նույն ամսին ուժի մեջ մտած օրենքները ներկայացված են տեղեկագրի առաջին բաժնում և չեն կրկնվում սույն բաժնում:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Կիբեռանվտանգության ոլորտում կիրառելի միջազգային ստանդարտների ցանկը սահմանելու մասին (N 662-Ն, ընդունված՝ 14.05.2026թ., ուժի մեջ՝ 15.05.2026թ.)

- Հայաստանում սահմանվում է կիբեռանվտանգության ոլորտում կիրառելի միջազգային ստանդարտների պարտադիր ցանկը, որը վերաբերում է կենսական նշանակության ոլորտների կրիտիկական ենթակառուցվածքներին, կիբեռանվտանգության ծառայություն մատուցողներին և աուդիտորներին: Էներգետիկայի, տրանսպորտի, առողջապահության, ֆինանսների և պետական կառավարման համակարգերի համար որպես հիմնական ստանդարտ է սահմանվել ISO/IEC 27001-ը:
- Որոշակի գործառնությունների համար սահմանվել են մասնագիտացված ստանդարտներ. վճարային քարտերի տվյալների մշակման համար պարտադիր է դառնում PCI DSS-ը, անձնական տվյալների դեպքում՝ ISO/IEC 27701-ը, իսկ արդյունաբերական համակարգերի (OT/ICS) շահագործման համար՝ ISA/IEC 62443 շարքը: Կիբեռանվտանգության ծառայություն մատուցողների համար, ըստ գործունեության տեսակի (օրինակ՝ թվային դատահետազոտություն, ներթափանցման թեստավորում, ամպային անվտանգություն), սահմանվել են լրացուցիչ պահանջներ և ուղեցույցներ:
- Աուդիտ իրականացնող կազմակերպությունների և անհատ աուդիտորների համար նույնպես սահմանվել են որակավորման և գործունեության հստակ չափանիշներ:

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին (N 728-Ն, ընդունված՝ 27.05.2026թ., ուժի մեջ՝ 28.05.2026թ.)

- Նախատեսվում է քաղաքաշինական փաստաթղթերի պետական համալիր փորձաքննություն իրականացնելիս փորձաքննական եզրակացությունը տրամադրել մինչև կառուցվող օբյեկտի շինարարության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության ավարտը, ինչը թույլ կտա առավել սեղմ ժամկետներում և ավելի պարզեցված կարգով խթանելու Հայաստանի Հանրապետությունում արհեստական բանականության տվյալների կենտրոնների կառուցմանը: Ակնկալվում է, որ հնարավոր բոլոր ներդրումներն՝ ուղղված ՀՀ տնտեսության մեջ ռազմավարական նշանակություն ունեցող բարձր տեխնոլոգիաների ստեղծմանն ու զարգացմանը, իրականացվեն հնարավորինս պարզեցված և արագացված:

Պետական տեղեկատվական համակարգի տվյալների փոխանակման շերտի ստեղծման և կիրառման կարգը հաստատելու մասին (N 767-Ն, ընդունված՝ 27.05.2026թ., ուժի մեջ՝ 02.06.2026թ.)

- Հայաստանի Հանրապետությունում թվային տնտեսության զարգացման և պետական մարմինների տեղեկատվական համակարգերի միջև անվտանգ փոխգործելիության ապահովման նպատակով ընդունվել է «Հանրային տեղեկությունների մասին» օրենքը, որի կիրարկումն ապահովելու նպատակով ընդունվել է որոշումը հաստատելով պետական տեղեկատվական համակարգի տվյալների փոխանակման շերտի ստեղծման և կիրառման կարգը: Նոր կարգավորումները ենթադրում են լայն ընդգրկվածություն՝
 1. պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ՝ օրենքը պարտադիր տարածվում է բոլոր այն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վրա, որոնք հավաքում, մշակում և կառավարում են տվյալների շտեմարաններ:
 2. հանրային ծառայություններ մատուցող ընկերություններ՝ կարգավորումները վերաբերում են նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի իմաստով հանրային ծառայությունների ոլորտի իրավաբանական անձանց:
 3. մասնավոր հատված. օրենքը տարածվում է նաև պայմանագրային հիմունքներով գործող այն իրավաբանական կամ ֆիզիկական անձանց պատկանող տեղեկատվական համակարգերի վրա, որոնց միջոցով ծառայությունների մատուցման ընթացքում իրականացվում է ֆիզիկական անձի նույնականացում:
- Տվյալների փոխանակման շերտի կիրառման կարգը և օրենքի որոշ դրույթներ չեն տարածվում հետևյալ համակարգերի վրա.
 1. պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկատվական համակարգեր,
 2. միջազգային պայմանագրերով պաշտպանվող տեղեկությունների շտեմարաններ,
 3. արտաքին գործերի, պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին հետախուզության ծառայության այն շտեմարաններ, որոնց միջոցով իրավաբանական և ֆիզիկական անձանց ծառայություններ չեն մատուցվում:
- Կարգի ընդունմամբ կձևավորվի պետական տեղեկատվական համակարգերի միջև տվյալների փոխանակման միասնական, անվտանգ և ստանդարտացված միջավայր: Մասնավորապես, կապահովվեն տվյալների փոխանակման անվտանգության, ամբողջականության և հասանելիության միասնական պահանջները: Կներդրվի հետազոտելիության մեխանիզմ մատյանների (լոգերի), էլեկտրոնային կնիքների կիրառմամբ:

- Նաև, կստեղծվի հիմք ավտոմատացված, արագ թվային փոխգործակցության համար՝ նվազեցնելով տվյալների կրկնակի հավաքումը, փաստաթղթաշրջանառությունը և մարդկային գործոնով պայմանավորված ռիսկերը:
- Տվյալների փոխանակման շերտի կառավարման, զարգացման, դրա անխափան և անվտանգ գործունեության ապահովման պարտականությունը վերապահվելու է Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովին:

ՀՀ կառավարության 2020 թվականի փետրվարի 13-ի N 171-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 701-Ն, ընդունված՝ 21.05.2026թ., ուժի մեջ՝ 31.05.2026թ.)

- Կառավարության 13.02.2020թ. N171-Ն որոշմամբ սահմանված են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից կամ նրանց հասցեով ՀՀ ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակները: Հստակեցվել է ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու պարտավորությանն առնչվող նորմը, ինչպես նաև այն ապրանքների ցանկը, որոնց՝ ՀՀ տարածք ներմուծումը կարգավորվում է ՀՀ օրենքներով և Կառավարության որոշումներով սահմանված կարգերով:
- Նախատեսվել է, որ որոշման հավելվածով սահմանված չափաքանակները գերազանցող քանակով ԵՏՄ անդամ հանդիսացող պետություններից ՀՀ տարածք ԵՏՄ ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմիններին այդ հանգամանքը հայտնի դառնալու օրն առձեռն կամ փոստային եղանակով ծանուցում է հանձնվում ֆիզիկական անձին՝ մինչև ներմուծման ամսվան հաջորդող ամսվա 20-ը օրենքով սահմանված կարգով ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու նպատակով:
- ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 1211, 151530 9000, 1520 00 000 0, 2501, 2712 10, 2804 40 000 0, 281000, 2817 00 000 0, 2827 20 000 0, 2827 51 000 0, 2827 600000, 2833 21 000 0, 2833 27 000 0, 2847 00 000 0, 2904-2909, 2912-2942000000, 2106 90 930 0, 2106 90 980 3, 2106 90 980 8 ծածկագրերին և 30 խմբին դասվող դեղագործական արտադրանքի (դեղի), 3913 ապրանքային դիրքին, 93-րդ և 97-րդ խմբերին դասվող ապրանքների՝ ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ տարածք ներմուծումը կարգավորվում է ՀՀ օրենքներով և Կառավարության որոշումներով սահմանված կարգերով:

ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N 1231-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (N 680-Ն, ընդունված՝ 21.05.2026թ., ուժի մեջ՝ 31.05.2026թ.)

- Կառավարության 17.07.2005թ. N1231-Ն որոշմամբ նախատեսված է, որ կենտրոնական և տեղական ռեզիստրները քաղաքացիների անհատական հաշվառման տվյալները պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման, իրավապահ մարմիններին և նոտարներին տրամադրում են գրավոր կամ էլեկտրոնային հարցումների հիման վրա: Քանի որ 2025 թվականի հաշվետու տարվանից սկսած ՀՀ բոլոր չափահաս քաղաքացիները պարտավոր են ներկայացնել եկամտային հարկի տարեկան հայտարարագրեր, հարկային մարմինը պետք է ինքնաշխատ կերպով նախալրացնի դրանք իր տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա: Այս նպատակով ՀՀ ՆԳՆ-ն բնակչության պետական ռեզիստրից հարկային մարմնին է տրամադրելու տվյալ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառված բոլոր չափահաս քաղաքացիների անհատական տվյալները: Տվյալների փոխանցումն անհրաժեշտ է քաղաքացիներին հարկ վճարողի հաշվառման համարներ (ՀՎՀՀ) տրամադրելու և հայտարարագրերի նախալրացումն ապահովելու համար: Ըստ նոր կարգավորման՝ բնակչության պետական ռեզիստրի կենտրոնական և տեղական ստորաբաժանումները քաղաքացիների տվյալները հարկային մարմնին կտրամադրեն առանց լրացուցիչ հարցումների:

ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 696-Ն, ընդունված՝ 21.05.2026թ., ուժի մեջ՝ 31.05.2026թ.)

- ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմինը իր տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա ինքնաշխատ նախալրացնում է եկամտային հարկի հարկային հաշվարկները: Ընդունված փոփոխություններին համապատասխան՝ այսուհետ, ԱԱԾ-ն տրամադրելու է տեղեկատվություն քաղաքացիների՝ հարկային տարվա ընթացքում ՀՀ-ում գտնվելու ժամանակահատվածի վերաբերյալ, ինչն անհրաժեշտ է հարկային ռեզիդենտությունը ճիշտ որոշելու համար: Արդարադատության նախարարությունն ու Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը հարկային մարմնին կփոխանցեն տվյալներ ֆիզիկական անձանց ընտանիքի անդամների վերաբերյալ: Միասնական սոցիալական ծառայությունը տեղեկատվություն կտրամադրի վճարված կենսաթոշակների, պետական նպաստների վերաբերյալ:
- Ամբողջ գործընթացը իրականացվելու է բացառապես էլեկտրոնային եղանակով:

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների՝ առանց մաքսատուրքերի և հարկերի վճարման ներմուծման բնաիրային չափաքանակներ սահմանելու մասին (N 715-Ն, ընդունված՝ 21.05.2026թ., ուժի մեջ՝ 01.09.2026թ.)

- ԵՏՀ խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 107 որոշմամբ սահմանված են արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմեր, որոնց սահմաններում անձնական օգտագործման ապրանքները ներմուծվում են ԵՏՄ մաքսային տարածք առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման, որով հստակ չափաքանակ սահմանված է միայն ծխախոտի և ալկոհոլային խմիչքների մասով, իսկ մյուս ապրանքների մասով սահմանված չափաքանակը ընդհանուր է՝
 1. ուղեբեռում օդային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների մասով սահմանված է 10 000 եվրոյին համարժեք գումարի և 50 կգ քաշի շեմը,
 2. ուղեբեռում օդային տրանսպորտից տարբերվող այլ տրանսպորտով կամ հետիոտն տեղափոխվող ապրանքների մասով սահմանված է 500 եվրոյին համարժեք գումարի և 25 կգ քաշի շեմը: Ընդ որում, Կառավարության 08.08.2024թ. N1206-Ն որոշմամբ սահմանված է ավելի խիստ՝ 200 եվրոյին համարժեք գումարի և 10 կգ քաշի շեմը,
 3. փոխադրողի կողմից առաքվող ապրանքների մասով սահմանված է 200 եվրոյին համարժեք գումարի և 31 կգ քաշի շեմը:
- ԵՏՄ մաքսային օրենսգրքի 256-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ԵՏՀ-ին է վերապահված ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ներմուծվող ապրանքների անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելու չափանիշների քանակական բնութագրերի սահմանումը, սակայն դեռևս սահմանված չէ: Միաժամանակ, մինչև Հանձնաժողովի կողմից նման քանակական բնութագրերի նախատեսումը հարցը պետք է կարգավորվի ռիսկերի համակարգի միջոցով, որի տեղեկատվությունը գաղտնի է և հրապարակման ենթակա չէ, ինչը ստեղծում է բարդություններ մաքսային վարչարարության և սահմանահատման ընթացքում հայտարարագրման ու մաքսատուրքերի ու հարկերի վճարման իրազեկվածության առումով:
- Ներկայացված որոշմամբ սահմանվել են երրորդ երկրներից ՀՀ տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների՝ առանց մաքսատուրքերի և հարկերի վճարման ներմուծման բնաիրային և (կամ) արժեքային չափաքանակները, հաշվի առնելով հետևյալ մոտեցումները.

1. կիլոգրամով նշված չափաքանակների գծով նվազագույն չափաքանակ սահմանվել է հիմք ընդունելով Կառավարության 08.08.2024թ. 1206-Ն որոշմամբ սահմանված 10 կգ քաշի շեմը,
2. կիլոգրամով նշված չափաքանակների գծով առավելագույն չափաքանակ սահմանվել է ԵՏՀ խորհրդի 20.12.2017թ. N107 որոշմամբ սահմանված առավելագույն՝ 51 կգ քաշի շեմը,
3. այլ չափման միավորներով նշված չափաքանակները սահմանվել են՝ ելնելով փորձառությունից, ինչպես նաև Կառավարության 13.02.2020թ. N171-Ն որոշմամբ ԵՏՄ մասով սահմանված չափաքանակներից:

- **Այսպիսով, 2026թ. սեպտեմբերի 1-ից որոշման հավելվածով** սահմանվել են անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների՝ առանց մաքսատուրքերի և հարկերի վճարման ներմուծման բնաիրային չափաքանակները: Հավելվածում նշված քանակները գերազանցող ապրանքները, այդ թվում ուղեկցող ուղեբեռով տեղափոխվող, ֆիզիկական անձանց կողմից փոխադրելիս ենթակա կլինեն հայտարարագրման և դրանց դիմաց կվճարվեն մաքսատուրքեր և հարկեր օրենսդրությամբ ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ապրանքների համար սահմանված դրույքաչափերին համապատասխան: Միաժամանակ, սահմանվել է, որ՝
 1. անկախ հավելվածի չափաքանակներից՝ մաքսատուրքերի և հարկերի վճարման պարտավորություն առաջանում է, եթե ներմուծված ապրանքների արժեքը և (կամ) քանակը, քաշը գերազանցում են ԵՏՀ խորհրդի 20.12.2017թ. N107 որոշման N1 հավելվածով սահմանված արժեքային և (կամ) քաշային և (կամ) քանակական նորմերը,
 2. հավելվածի չափաքանակը գերազանցելու, սակայն ԵՏՀ խորհրդի 20.12.2017թ. N107 որոշման N1 հավելվածով սահմանված արժեքային և (կամ) քաշային և (կամ) քանակական նորմերը չգերազանցելու դեպքում հավելվածի չափաքանակը գերազանցող մասի արժեքի նկատմամբ կիրառվում են ԵՏՀ խորհրդի 20.12.2017թ. N107 որոշման N2 հավելվածի 1-ին աղյուսակով սահմանված՝ մաքսատուրքերի, հարկերի միասնական դրույքաչափերը՝ կախված ապրանքների տեղափոխման եղանակից,
 3. հավելվածի չափաքանակները չեն տարածվում ԵՏՀ խորհրդի 20.12.2017թ. N107 որոշման N 6 հավելվածով սահմանված՝ անձնական օգտագործման ապրանքներին չդասվող ապրանքների կատեգորիաների վրա, ինչպես նաև ֆիզիկական անձինք չեն ազատվում՝ ԵՏՄ մաքսային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում արգելքները և սահմանափակումները պահպանելու պարտավորությունից:

- Անկախ հավելվածով սահմանված չափաքանակներից՝ ԵՏՄ ԱՏԳ ԱԱ հետևյալ ծածկագրերի՝ 1211, 151530 9000, 152 00 000 0, 2501, 2712 10, 2804 40 000 0, 281000, 2817 00 000 0, 2827 20 000 0, 2827 51 000 0, 2827 600000, 2833 21 000 0, 2833 27 000 0, 2847 00 000 0, 2904-2909, 2912-2942000000, 3001-3004, 3006 30 0000, 3006 60 000, 3006 930000, 3913 դեղագործական արտադրանքը (դեղերը) և (կամ) հետևյալ դիրքերում ընդգրկված դեղերը (դեղագործական արտադրանքը)՝ 2106909300, 2106909803, 2106909808՝ ֆիզիկական անձանց կողմից ՀՀ են ներմուծվում Կառավարության սահմանած դեպքերում, կարգով և չափաքանակներով:
- Միաժամանակ, ուժը կորցրած է ճանաչվել Կառավարության 08.08.2024թ. N1206-Ն որոշումը:

ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 12-ի N 1308-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին (N 628-Ն, ընդունված՝ 07.05.2026թ., ուժի մեջ՝ 06.06.2026թ.)

- Ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման և արտահանման, ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման, այդ արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության լիցենզավորումն իրականացնում է ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը լիցենզիայի հայտի մերժման հիմքերի առկայությունն ստուգելու նպատակով համապատասխան հարցումներ է ուղարկում ՀՀ արտաքին, ներքին գործերի, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություններ, պետական եկամուտների կոմիտե, ազգային անվտանգության ծառայություն:
- Ռազմական նշանակության արտադրանքի ներմուծմանը, արտահանմանը, տարանցիկ փոխադրմանը, առևտրի միջնորդական գործունեությանը ներկայացվող պարտադիր պահանջները նախատեսված են «Լիցենզավորման մասին» օրենքի 12.1-ին հոդվածով, ինչպես նաև Կառավարության 12.11.2009թ. «Ռազմական նշանակության արտադրանքի ցանկը, ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման, արտահանման, ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման, այդ արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության լիցենզավորման կարգերը և անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» N 1308-Ն որոշմամբ, որը չի նախատեսում լիցենզավորման հայտի՝ ՀՀ ազգային անվտանգությանը կամ շահերին սպառնալու հիմքով մերժման հնարավորություն: Որոշման լրացումներով ներդրվում է լիցենզավորման հայտը մերժելու նոր հիմք, ըստ որի՝ հայտը կարող է մերժվել, եթե լիցենզիայի տրամադրումը կարող է սպառնալիք հանդիսանալ ՀՀ ազգային անվտանգությանը կամ շահերին:

ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 7-ի N 1739-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 670-Ն, ընդունված՝ 14.05.2026թ., ուժի մեջ՝ 25.05.2026թ.)

- 13.11.2025թ. ՀՕ-372-Ն օրենքով փոփոխություններ են կատարվել «Թափոնների մասին» օրենքի 13-րդ հոդվածում, մասնավորապես՝
 - 1.«տեղադրում» բառը փոխարինվել է «պահում, օգտահանում կամ հեռացում» բառերով, որով հստակեցվել է թափոնների մասին վարչական վիճակագրական հաշվետվությունով ներկայացման ենթակա տվյալների շրջանակը, այսինքն՝ տեղեկատվություն ներկայացնելու պահանջ սահմանելով նաև տվյալ կազմակերպությունում հաշվետու տարվա ընթացքում պահվող, օգտահանվող (որպես երկրորդային նյութական կամ էներգետիկ ռեսուրս օգտագործվող, ներառյալ օգտահանման նպատակով մշակվող, վերամշակվող) կամ հեռացվող (չօգտահանվող, այդ թվում՝ տեղադրվող, թաղվող, վնասագերծվող կամ ոչնչացվող) թափոնների համար,
 - 2.հստակեցվել և ամբողջականացվել է օրենսդրությամբ սահմանված թափոնների առաջացման, պահման, օգտահանման կամ հեռացման մասին վարչական վիճակագրական հաշվետվության անվանումն ու բովանդակությունը:
- Վերոնշյալ փոփոխություններին համահունչ, փոփոխություններ են կատարվել Կառավարության 07.12.2006թ. «Թափոնների պետական հաշվառման կարգը սահմանելու մասին» N1739-Ն որոշման մեջ: Այսուհետ, բացի թափոնների գոյացումից, պարտադիր հաշվառման և հաշվետվողականության ենթակա են նաև թափոնների պահման, օգտահանման (վերամշակման) և հեռացման գործընթացները:
- Ընդ որում, համապատասխան փոփոխություններ պետք է կատարվեն նաև ՀՀ բնապահպանության նախարարի 22.08.2002թ. «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» Ձև N 1-թափոն (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության Ձևը և «Թափոնների առաջացման, օգտագործման և հեռացման մասին» Ձև N 1 թափոն (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության լրացման հրահանգը հաստատելու մասին» N 112-Ն հրամանում:
- Նախատեսվում է նաև, որ 2026 թվականից սկսած թափոնների վերաբերյալ վարչական վիճակագրական հաշվետվություններն ընդունվելու և պահպանվելու են բացառապես էլեկտրոնային եղանակով՝ նոր ստեղծված «Շրջակա միջավայրի կառավարման ոլորտի թվային ծառայությունների հարթակի» միջոցով: Ընդ որում, Վիճակագրական կոմիտեին և Բնապահպանության ու ընդերքի տեսչական մարմնին տրվելու է ուղիղ հասանելիություն այդ էլեկտրոնային հարթակում գեներացվող տվյալներին:

Հայաստանի Հանրապետությունից մի շարք ապրանքների՝ դեպի Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխման և երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին (N 650-Ն, ընդունված՝ 14.05.2026թ., ուժի մեջ՝ 03.08.2026թ.)

- Կառավարության 30.10.2025թ. N1518-Ն որոշմամբ ժամանակավորապես արգելվել է սև և գունավոր մետաղների ջարդոնի ու թափոնի, որոշ արտադրատեսակների, ինչպես նաև սև և գունավոր մետաղից պատրաստված օգտագործված որոշ ապրանքների արտահանումը 2026 թվականի փետրվարի 2-ից մինչև 2026 թվականի օգոստոսի 2-ը:
- 2026 թվականի օգոստոսի 3-ից մինչև 2027 թվականի փետրվարի 3-ը երկարաձգվում է սև և գունավոր մետաղների ջարդոնի, թափոնների ու որոշ օգտագործված ապրանքների արտահանման արգելքը: Սահմանափակումը չի վերաբերում հետևյալ դեպքերին.
- ժամանակավոր ներմուծված կամ վերամշակման նպատակով Հայաստանում գտնվող ապրանքների վերաարտահանմանը,
- վերանորոգման կամ երաշխիքային սպասարկման նպատակով տեղափոխվող ապրանքներին,
- անձնական օգտագործման փոքր չափաքանակներին և քաղաքացիական օդանավերի ու երկաթուղային տրանսպորտի շահագործման համար անհրաժեշտ մասերին,
- որոշ չօգտագործված մետաղական ստրուկցիաներին և կցամասերին:

ՀՀ կառավարության 2026 թվականի փետրվարի 5-ի N 124-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (N 750-Ն, ընդունված՝ 27.05.2026թ., ուժի մեջ՝ 06.06.2026թ.)

- Կառավարության 05.02.2026թ. N124-Ն որոշմամբ սահմանված են ռազմաուսումնական հաստատություն ավարտած և ՀՀ ՊՆ համակարգում կամ ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերում սպայական պաշտոնի նշանակված սպայական կազմի զինծառայողների կողմից պետական աջակցությամբ բնակարանի կամ բնակելի տան կամ կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքից կառուցվող բնակարան կամ բնակելի տուն գնելու իրավունքի ձեռքբերման նպատակով հիփոթեքային վարկավորման նպատակային ծրագիրը և պայմանները: Սահմանվում է, որ ձեռք բերվող բնակելի անշարժ գույքը գրավադրվում է համագործակցող կազմակերպությունում, ապա սահմանվում է, որ ծրագրի դադարման որոշ դեպքերում համագործակցող կազմակերպությունը կարող է իր պահանջի իրավունքները և գրավի առարկայի նկատմամբ իրավունքները, զիջել պետությանը՝ օրենքից և վարկային պայմանագրից բխող համապատասխան պայմանների առկայության դեպքում:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու և անհետաձգելի համարելու մասին (N 677-Ն, ընդունված՝ 21.05.2026թ., ուժի մեջ՝ 22.05.2026թ.)

- Առաջարկվում է ներդնել «ծնողական ժամ» հասկացությունը՝ աշխատող ծնողներին հնարավորություն տալով ավելի արդյունավետ համատեղել աշխատանքային և ընտանեկան պարտականությունները: Նախագիծը վերաբերում է մինչև 12 տարեկան, ինչպես նաև հաշմանդամության խորը կամ ծանր սահմանափակում ունեցող մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող ծնողներին:

- Ծնողական ժամը տրամադրվում է՝
 1. մինչև երկու երեխա ունեցող ծնողին՝ օրական առավելագույնը 30 րոպե.
 2. երեք եւ ավելի երեխա ունեցող ծնողին՝ օրական առավելագույնը 1 ժամ.
 3. մինչև 18 տարեկան՝ հաշմանդամության խորը կամ ծանր սահմանափակումով երեխա ունեցող ծնողին՝ օրական առավելագույնը 1 ժամ (անկախ երեխաների թվից):
- Ծնողական ժամը տրամադրվում է աշխատողի գրավոր դիմումի հիման վրա: Ծնողական ժամը ներառվում է աշխատաժամանակում, և այդ ժամանակահատվածում պահպանվում է աշխատողի հիմնական աշխատավարձը:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև ներկայացված նախագիծը ընդունվել է առաջին ընթերցմամբ:

«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի է [հետևյալ հղումով](#)), «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին (հասանելի է [հետևյալ հղումով](#)) և «Վիճակախաղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի է [հետևյալ հղումով](#))

- Նախագծերի համաձայն՝ խաղերին մասնակցությունը կարգելվի այն քաղաքացիների համար, որոնք՝
 1. օգտվել են պետական աջակցության ծրագրերից, որոնցով նախատեսված է խաղերին մասնակցության սահմանափակում,
 2. հաշվառված են անապահով ընտանիքների համակարգում կամ բնակվում են պետական սոցիալական կացարաններում,
 3. գտնվում են սնանկության վարույթում, ճանաչվել են սնանկ կամ ունեն պետական բյուջեի նկատմամբ չմարված պարտավորություններ,
 4. հաշվառված են Կախվածությունների բուժման ազգային կենտրոնում,
 5. օգտվում են պետական սուբսիդավորման ծրագրերից կամ ստանում են որևէ տեսակի պետական նպաստ,
 6. ունեն սպառողական վարկեր, որոնց ընդհանուր չափը գերազանցում է իրենց տարեկան եկամուտների 40 տոկոսը,
 7. հասել են կենսաթոշակային տարիքին, իսկ նրանց եկամտի միակ աղբյուրը կենսաթոշակն է:

- Քաղաքացիների համար սահմանվելու է խաղերին մասնակցության առավելագույն թույլատրելի շեմ՝ տարեկան հայտարարագրված եկամտի 20 տոկոսի չափով: Սահմանափակումները չեն տարածվելու ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձանց վրա:
- Քաղաքացիները հնարավորություն կունենան դիմել լիազոր մարմնին՝ պահանջելով արգելել իրենց մասնակցությունը խաղերին:
- Արգելքը կսահմանվի 5 տարի ժամկետով և ինքնաշխատ կերկարաձգվի ևս 5 տարով, եթե ժամկետի ավարտից առաջ անձը չներկայացնի այն վերացնելու դիմում:
- Խաղերի կազմակերպիչները պարտավոր կլինեն իրենց կայքերում ունենալ հստակ տեսանելի ինքնաարգելափակման կոճակ, որի օգտագործումը կհամարվի պաշտոնական դիմում ներկայացնելուն համարժեք:
- Խաղացողների նույնականացումն իրականացվելու է խաղային հաշիվների անկանխիկ համալրման ընթացքում:
- Բացի այդ, խաղացողի կողմից IP հասցեի հաճախակի փոփոխությունը կարող է գնահատվել որպես ռիսկային վարքագիծ և հիմք հանդիսանալ սահմանափակումներ կիրառելու համար:

E-DRAFT ՀԱՐԹԱԿՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԴՐՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐ

**Առողջության համընդհանուր
ապահովագրության ապահովագրավճարի
դրույքաչափի փոփոխման վերաբերյալ
առաջարկությունների մշակման և
ներկայացման կարգը սահմանելու մասին
(հասանելի է հետևյալ հղումով)**

- «Առողջության համընդհանուր
ապահովագրության մասին» օրենքի 13-րդ
հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝
առողջության համընդհանուր
ապահովագրության ապահովագրավճարի
դրույքաչափի փոփոխման վերաբերյալ
առաջարկությունների մշակման և
ներկայացման կարգը սահմանվում է
Կառավարության կողմից: Նախագծով
սահմանվում է առողջության համընդհանուր
ապահովագրության ապահովագրավճարի
դրույքաչափի փոփոխման վերաբերյալ
առաջարկությունների մշակման և
ներկայացման ընթացակարգ՝
ապահովագրավճարի դրույքաչափի
փոփոխման առաջարկությունների մշակման
հիմքերը, առաջարկությունների
բովանդակությանը ներկայացվող
պահանջները, շահագրգիռ պետական
մարմինների հետ համաձայնեցման և
ընդունման ընթացակարգը:

**«Բնապահպանական պատասխանատվության
մասին» և «Վարչական իրավախախտումների
վերաբերյալ Հայաստանի Հանրապետության
օրենսգրքում լրացում կատարելու մասին»
օրենքների նախագծեր (հասանելի է հետևյալ
հղումով)**

- «Բնապահպանական պատասխանատվության
մասին» նոր օրենքի նախագծով ներդրվում է
«աղտոտողը վճարում է» սկզբունքը, որը
պարտավորեցնում է տնտեսվարողներին
իրականացնել շրջակա միջավայրի փաստացի
վերականգնում սուկ տուգանքներ վճարելու
փոխարեն: Նախագծի հիմքում ընկած է այն
սկզբունքը, որ տնտեսական գործունեություն
իրականացնողները (օպերատորները)
անձամբ պետք է կրեն վնասի կանխարգելման
և վերականգնման պատասխանատվությունը:
Բնապահպանական վնաս է համարվում
տնտեսական գործունեության հետևանքով
առաջացած՝ ջրային ռեսուրսների, հողի և
կենսաբազմազանության ցանկացած չափելի
բացասական փոփոխություն կամ դրանց
ծառայությունների խաթարում, որն ստեղծում է
վտանգ մարդու առողջության կամ շրջակա
միջավայրի պահպանման համար: Նախագծով
առաջարկվում են հետևյալ հիմնարար
լուծումները.
- Օբյեկտիվ (խիստ) պատասխանատվություն՝
սահմանվում է բարձր ռիսկային
գործունեությունների ցանկ, որի դեպքում
օպերատորը կրում է խիստ
պատասխանատվություն:

- Վերականգնման առաջնահերթություն՝
սահմանվում է, որ օպերատորը պարտավոր է
ոչ թե պարզապես գումար վճարել, այլ անձամբ
մշակել և շրջակա միջավայրի
նախարարության հաստատմանը
ներկայացնել վերականգնողական
միջոցառումների ծրագիր՝ ապահովելով
հիմնական, լրացուցիչ կամ փոխհատուցող
վերականգնում:
- Պարտադիր ֆինանսական երաշխիքներ՝
բարձր ռիսկային գործունեություն
իրականացնողները պարտավոր են
ապահովել ֆինանսական երաշխիք:
- Անհապաղ գործողություններ՝ հստակեցվում են
տեսչական մարմնի լիազորությունները և
օպերատորի պարտականությունը՝ վնասի
անմիջական վտանգի դեպքում:
- «Վարչական իրավախախտումների
վերաբերյալ օրենսգրքով առաջարկվում է
սահմանել խիստ վարչական
պատասխանատվություն (1,0 մլն դրամից
մինչև 3,0 մլն. դրամ)՝ «Բնապահպանական
պատասխանատվության մասին» օրենքով
սահմանված կարգով շրջակա միջավայրին
սպառնացող անմիջական վտանգի կամ
հասցված վնասի մասին լիազոր մարմնին
չտեղեկացնելու, հրատապ կանխարգելիչ կամ
վերականգնողական միջոցառումները
չիրականացնելու, բնապահպանական վնասի
կանխարգելման կամ հասցված
բնապահպանական վնասի վերականգնման
վերաբերյալ բնապահպանության և ընդերքի
տեսչական մարմնի տված պարտադիր
կատարման ցուցումները
(հանձնարարականները) սահմանված
ժամկետում չկատարելու դեպքերում:
- Նախատեսվում է, որ կարգավորումները ուժի
մեջ է մտնելու 2029 թվականի հունվարի 1-ից:

**«Ֆոնդային բորսաների ցանկը սահմանելու
մասին» ՀՀ կառավարության որոշման
նախագիծ (հասանելի է հետևյալ հղումով)**

- Նախագծով սահմանվում է այն ֆոնդային
բորսաների ցանկը, որոնցում չցուցակված
բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների
համար կիրառվելու է եկամտային հարկի և
շահութահարկի 15% դրույքաչափ:
Կարգավորումը մասնավորապես վերաբերում
է բանկերի կողմից թողարկված
բաժնետոմսերին:
- 2026 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի
31-ը ընկած ժամանակահատվածում նման
շահաբաժինների համար սահմանվում է նաև
պետական տուրք՝ շահաբաժնի 15%-ի չափով:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխությունները նախաձեռնվել են երկու կարևոր հարցերի՝ հեռուստանման մեդիածառայությունների և անօրինական OTT հարթակների կարգավորման համար: Մասնավորապես՝
- Տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացման, համացանցի լայնածավալ տարածման և տեսալսողական տեղեկատվության տարածման ձևաչափերի էական փոփոխության պայմաններում նկատվում է, որ տեսալսողական տեղեկատվության տարածման հիմնական հարթակը աստիճանաբար տեղափոխվում է համացանցային միջավայր: Մասնավորապես, վերջին տարիներին զգալիորեն աճել է համացանցում հասանելի «հեռուստանման» տեսալսողական տեղեկատվության տարածումը, որն իր բնույթով և ազդեցությամբ համադրելի է դասական հեռարձակման հետ, սակայն դուրս է մնում գործող տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող իրավական կարգավորման տիրույթից:
- Հաջորդ խնդիրը վերաբերում է Հայաստանում վերջին տարիներին դիտարկվող անօրինական OTT հարթակների աճին, որոնք տրամադրում են տեսալսողական բովանդակություն՝ առանց համապատասխան լիցենզիաների և իրավատերերի թույլտվության: Այս հարթակները խախտում են հեղինակային իրավունքները՝ զրկելով օրինական իրավունք ունեցող անձանց, իրավատերերին իրենց հասանելի եկամտից: Առաջարկվող կարգավորման արդյունքում՝
- 1. կապահովվի տեսալսողական մեդիայի ոլորտում իրավական կարգավորման ամբողջականությունը՝ ներառելով նաև համացանցային միջավայրում տարածվող տեսալսողական, այդ թվում՝ հեռուստանման բովանդակությունը,
- 2. կստեղծվեն համաչափ կարգավորման պայմաններ տեսալսողական տեղեկատվություն տարածող բոլոր սուբյեկտների համար՝ անկախ օգտագործվող տեխնոլոգիական ձևաչափերից,
- 3. կբարձրանա տեսալսողական տեղեկատվության տարածման ոլորտում պատասխանատվության մակարդակը:

ՀՀ կառավարության 2025 թվականի ապրիլի 17-ի N 450-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ԱԺ կողմից ընդունված «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքում կատարված փոփոխությունների կիրարկումն ապահովելու անհրաժեշտությամբ: Կառավարության 2025 թվականի ապրիլի 17-ի N 450-Ն որոշմամբ հստակեցվում են պետական աջակցության տրամադրման կարգավորումները:

ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում լրացում կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է սահմանել 10 տարվա արգելք «անբարեխիղճ» ընդերքօգտագործողների համար: Մասնավորապես՝ այն դեպքերում, երբ ընդերքօգտագործման իրավունքը դադարեցվել է օրենսգրքով նախատեսված որոշակի խախտումների հիմքով տվյալ իրավաբանական անձը, նրա իրական շահառուները, ղեկավարները, ինչպես նաև նրանց հետ փոխկապակցված ընկերությունները 10 տարի ժամկետով չեն կարող ձեռք բերել նոր ընդերքօգտագործման իրավունք: Այս սահմանափակումը տարածվում է այն անձանց վրա, որոնց գործողությունների կամ անգործության հետևանքով առաջացել են իրավունքի դադարեցման հիմքերը:
- Նաև, փոփոխությամբ նախատեսվում է, որ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու պարտավորությունը կտարածվի ընդերքօգտագործման բոլոր տեսակների վրա՝ այլևս չսահմանափակվելով միայն մետաղական օգտակար հանածոների ուսումնասիրությամբ կամ արդյունահանմամբ: Առաջարկվում է նաև ներդնել վերահսկողության նոր մեխանիզմ: Եթե իրական շահառուների վերաբերյալ ներկայացված տվյալներում հայտնաբերվի 10 տարվա արգելքի տակ գտնվող անձի մասնակցություն, լիազոր մարմինը տվյալ ընկերությանը կտա գրավոր զգուշացում: Սահմանված ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում ընկերության ընդերքօգտագործման իրավունքը կարող է կասեցվել կամ դադարեցվել:

«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքով սահմանված դեպքերում հանրության գերակա շահերի ապահովման նպատակով օտարվող սեփականության գնահատողի ընտրությունն իրականացնելու կարգը սահմանելու մասին» կառավարության որոշման նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Ըստ սահմանվող ընթացակարգի՝ սեփականատիրոջը և գույքային իրավունքներ ունեցողներին իրավունք է վերապահվում ծանուցումը ստանալուց հետո երկշաբաթյա ժամկետում լիազոր մարմնին առաջարկել իրենց նախընտրելի գնահատողի թեկնածությունը, որի ներգրավումն այդ դեպքում դառնում է պարտադիր: Եթե սահմանված ժամկետում սեփականատերը թեկնածու չի առաջարկում կամ հրաժարվում է առաջարկել, ապա գնահատողի ընտրությունն իրականացվում է պատահականության սկզբունքով՝ Կադաստրի կոմիտեի հատուկ համակարգչային ծրագրի միջոցով: Համակարգչային ծրագիրն իրականացնելու է ինքնաշխատ վիճակահանություն: